

3471



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«25» 03 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 072 - 25

Նախաձեռնող՝

«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ

ք. Երևան, Չարենցի փ. 1

Գործունեությունը՝

Հացաշեն բնակավայրում կրթահամալիրի կառուցում

Արագածոտնի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 072 - 25

«25» Մարտի 2025թ.

Արագածոտնի մարզի Թալին համայնքի Հացաշեն բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Հացաշեն բնակավայր

Ներածական մաս. «ԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է Հացաշեն բնակավայրում կառուցել կրթահամալիր:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ օգտագործման սեփականություն:

Նկարագրական մաս. Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արագած լեռան հարավ-արևմտյան լանջին, տեղամասի ռելիեֆը հարթ է, մակերևույթի բացարձակ նիշերը տատանվում են 1577-1581 մ սահմաններում: Տարածքում ստորգետնյա ջրերը գտնվում են 8.0 մ-ից խորը հորիզոններում: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ, ինչպիսիք են՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, ճահճացումը և այլն, բացակայում են:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է Արագածոտնի մարզի Թալին համայնքի Հացաշեն բնակավայրի 1-ին փողոց, 4-րդ փակուղի 12 հիմնական դպրոց հասցեում



144 աշակերտական տեղով և 40 տեղ մանկապարտեզի սաների համար նոր կրթահամալիրի կառուցում:

Տարածքում գտնվում է բնակավայրի գոյություն ունեցող դպրոցը, ջրհավաք՝ 36 քմ և կաթսայատուն՝ 209.75 քմ: Քանդման աշխատանքները կիրականացվեն համաձայն քանդման աշխատանքների նախագծի՝ առանց պայթեցման: Քանդման աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական աղբը տարածքում չի կուտակվելու, անմիջապես տեղափոխվելու է նախապես համայնքապետարանի հետ համաձայնեցված աղբավայր: Շինարարական աղբի ծավալը կկազմի մոտ 2300 խմ:

Տարածքում ծառաթփային բուսականություն չկա: Նախատեսվող կրթահամալիրի հարևանությամբ գտնվում են բնակելի տներ՝ 74.14 մ և 104.88 մ հեռավորությունների վրա:

Նոր դպրոցը նախատեսվում է երկու հարկանի՝ 21.6x20.4 մ չափերով նկուղային հարկով, որտեղ նախատեսված են գրադարան, խոհանոցային սենյակ, բուժկետ, սանհանգույց տղաների և աղջիկների համար, ջրի ռեզերվուար, կոյուղու պոմպակայան, սանհանգույց սակավաշարժուն խմբի համար և այլն:

Գլխավոր մուտքի աստիճանների մոտ դպրոցական հանդիսությունների համար նախատեսված է հարթակ: Նախասրահին կհաջորդի հանգստի համար նախատեսված տարածքը, որի աջ և ձախ կողմերում կլինեն դասասենյակները, կաբինետները, տնօրենի առանձնասենյակը՝ ընդունարանով, բժշկի, մարզիչի սենյակը, բուժետը՝ իր խոհանոցային մասով, սանհանգույցներ: Նախասրահի աջ մասում նախագծված են մարզասրահը, հանդերձարաններ, 144 տեղանոց հանդիսությունների դահլիճը: Դահլիճներում նախատեսված առանձին մուտքերը հնարավորություն կտան դահլիճներն օգտագործել գյուղի միջոցառումների համար: Երկրորդ հարկում նախատեսված են դասասենյակներ, ռազմագիտության, ռոբոտատեխնիկայի կաբինետները, ուսուցչանոց, սանհանգույցներ, մարզադահլիճի տրիբունա:

Մանկապարտեզի մասնաշենքը նախատեսված է երկու խմբի համար և միջանցքով կապված կլինի դպրոցական մասնաշենքի հետ: Մանկապարտեզի առաջին հարկում տեղադրված են հանդերձարաններ, սանհանգույցներ, խաղասենյակներ, և ննջարաններ երեխաների համար, ինչպես նաև վարիչի, բժշկի սենյակը մեկուսարանով և դայակների սենյակները: Սակավաշարժուն խմբի երեխաների համար նախատեսված է տեղադրել վերելակ: Աստիճանավանդակների դռները հրակայուն են, ինքնափակվող:

Կրթահամալիրի տարածքում նախատեսվում է 4.0x8.0 մ ջերմոց, 20x40 մ բաց մարզադաշտ՝ 120 տեղանոց տրիբունայով, տնտեսական բակ, ավտոկայանատեղի: Դպրոցի հողամասը ամբողջ պարագծով լինելու է ցանկապատված: Նախատեսվում է ճանապարհի ասֆալտապատում, մայթեր՝ բետոնե գունավոր սալիկներով, բազալտից եզրաքարերի տեղադրում, խաղադաշտի և սպորտհրապարակի հատակների կառուցում՝ ռետինե ծածկույթով և արհեստական խոտածածկույթով: Նախատեսվում է կանաչապատ տարածքներ և սիզամարգեր: Բարեկարգվող մասում կիրականացվի արտաքին լուսավորության սարքերի տեղադրում, արտաքին ինժեներական կոմունիկացիաների՝ ջուր, կոյուղի, ջրահեռացման համակարգի ցանցերի կառուցում:

Դպրոցում նախատեսվում է ընդհանուր օդափոխության մեխանիկական դրդմամբ համակարգեր:

Կրթահամալիրի ջրագիծը նախատեսվում է Հացաշեն բնակավայրի ՕԿՋ-ից: ՕԿՋ-ն գտնվում է դպրոցի տարածքի կից, որը նախատեսված է եղել նախկին դպրոցի



ջրամատակարարման կարիքների համար: Ջրահեռացումն իրականացվելու է արտաքին ջրթափերով:

Կենցաղային կոյուղու ցանցը կլինի համակցված: Շինության վերգետնյա հատվածի կոյուղին ինքնահոս կհեռանա բակային ցանց, իսկ նկուղային հարկում նախատեսված սանհագույցների կոյուղին բակային ցանցին կմիանա կոյուղու ճնշումային սարքավորման օգնությամբ: Կոյուղագիծը նախատեսվում է միացնել նոր կառուցվող կոյուղու մաքրման «Топак 100» սարքավորմանը:

Էլեկտրամատակարարումն իրականացվելու է 400 կՎԱ հզորության տրանսֆորմատորային ենթակայանից:

Նախագծով նախատեսվում է 149.6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում կրթահամալիրի տարածքում, որն ամբողջությամբ կլինի ցանկապատված:

Ջեռուցումը նախատեսված է էլեկտրական յուղային ռադիատորներով:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասի մակերես՝ 12000 քմ,
- կառուցապատման մակերես՝ 2037 քմ,
- կանաչապատման մակերես՝ 5544 քմ,
- ասֆալտապատ փողոց՝ 1610.5 քմ,
- մայթեր և անցումներ՝ 1701 քմ,
- բաց սպորտհրապարակի տարածք՝ 962.5 քմ,
- մանկական խաղահրապարակներ և տաղավարներ՝ 145 քմ:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր հողային հանույթը կկազմի՝ 6350 խմ, որից բուսահողը կլինի՝ 3600 խմ, հետլիցքը՝ 825 խմ, իսկ ավելացած 1925 խմ հողային զանգվածը կհեռացվի Թալինի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ թխկի սրատերև կարմիր՝ 53 հատ, գնդաձև իլենի՝ 27 հատ, սյունաձև թույա՝ 23 հատ, բարդի արծաթափայլ՝ 38 հատ, բարբարիս՝ 11 հատ, ֆորգիցիա՝ 12 հատ, եղևնի կովկասյան՝ 7 հատ, գիհի կազակական՝ 14 հատ, հուդայածառ՝ 5 հատ, ձիակասկ՝ 3 հատ, յասաման՝ 14 հատ, թզուկ վարդեր՝ 81 քմ/14 թուփ, սիզամարգ՝ 5330.2 քմ:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ոռոգումն իրականացվելու է ցնցուղային եղանակով, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն փորման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման հետ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվտանգության վրա շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով և այլն:



Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար: Տարածքի հոսքաջրերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին: Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն 25 խմ ծավալով պարզարան, որը կտեղադրվի շինարարական հրապարակին կից: Պարզարանում տեղի կունենա մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով՝ սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում,
- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոխված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինադրից,
- հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը,
- եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել 2 տարին գերազանցող ժամկետով, ապա հողմատարումը և ողողումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թեքություններն ամրացվում են խոտացանքով կամ այլ եղանակներով,
- լայնակույտերը տեղադրվում են գյուղատնտեսության համար ոչ պիտանի տեղամասերում՝ բացառելով լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճով, ճալաքարով ու շինարարական աղբով աղտոտումը:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում կառաջանա շինարարական աղբ, որն ամբողջությամբ կտեղափոխվի Թալինի համայնքապետարանի հետ համաձայնեցված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Առկայության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները տեսակավորել և օգտագործել որպես երկրորդային հումք, վտանգավոր արտահոսքերի դեպքում կլանիչ նյութով մաքրել առաջացած հետքերը և այլն:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր



ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Կրթահամալիրի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրական 2-3 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:

Պատճառարանական մաս. Հաշվետվության գնահատման և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Արագածոտնի մարզի Թալին համայնքի Հացաշեն բնակավայրի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լուսններին գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Արագածոտնի մարզպետարանից, Թալինի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Թալինի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:
3. Կանաչապատումն իրականացնել համայնքի հետ համաձայնեցված՝ տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝



Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:

4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
5. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Թալին համայնքի Հացաշեն բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝



Սվետլանա Կիզիրյան